2019/20 Կանոնների փոփոխություններ – տեքստ և բացատրություններ

Կանոն 3 – Խաղացողները

3. Փոխարինման ընթացակարգ

Փոփոխված տեքստ

Խաղացողին փոխարինողով փոխարինելու ժամանակ պետք է պահպանել հետևյալ պայմանները.

- (…)
- փոխարինվող խաղացողը.
    - ✓ պետք է մրցավարից ստանա խաղադաշտը թողնելու թույլտվություն, բացառությամբ, եթե նա արդեն գտնվում է խաղադաշտից դուրս: Նա պետք է թողնի խաղադաշտը եզրագծի ամենամոտ կետից, բացառությամբ, եթե մրցավարը հրահանգում է նրան անմիջապես թողնել խաղադաշտը միջին գծի մոտից կամ այլ տեղից (օր. անվտանգության / ապահովության, կամ վնասվածքի պատճառով)
    - ✓ պետք է անմիջապես գնա տեխնիկական գոտի կամ հանդերձարան և այլևս չի կարող մասնակցել խաղին, բացառությամբ, եթե թույլատրվում է կատարել հետադարձ փոխարինումներ
    - ✓ եթե խաղացողը, ով պետք է փոխարինվի, հրաժարվում է թողնել խաղադաշտը, ապա խաղը պետք է շարունակվի

Բացատրություն

Փոփոխությունը կատարվել է, որպեսզի կանխվի փոխարինվող խաղացողի կողմից միտումնավոր ժամանակ ձգձգելը, օրինակ, երբ նա դանդաղորեն դուրս է գալիս խաղադաշտից միջին գծի մոտից (որը կանոնի պահանջ չէ): Բացառություն կարող է լինել, երբ մրցավարը այլ բան է հրահանգում, օրինակ այն դեպքերում, երբ խաղացողը կարող է արագ դուրս գալ միջին գծից, անվտանգության / ապահովության նկատառումներով, կամ, երբ խաղացողին դուրս են բերում պատգարակով: Փոխարինված խաղացողը պետք է անմիջապես գնա տեխնիկական գոտի կամ հանդերձարան, որպեսզի չառաջանան խնդիրներ փոխարինողների, հանդիսատեսների կամ խաղի պաշտոնյաների հետ: Խաղացողը, ով խախտում է այս Կանոնի ոգին, պետք է պատժվի ոչ սպորտային վարքագծի համար, այն է խաղի վերսկսման ձգձգում:

Կանոն 4 – Խաղացողների հանդերձանքը

3. Գույներ

Ավելացված տեքստ

Ներքնաշապիկները պետք է լինեն.

- միագույն՝ խաղաշապիկի թևքերի հիմնական գույնի կամ
- ամբողջապես կրկնօրինակեն խաղաշապիկի թևքերի մոդելը / գույնը

Բացատրություն

Այժմ արտադրողները արտադրում են ներքնաշապիկներ, որոնց թևքերը խաղաշապիկի թևքերի մոդելի / գույնի ամբողջական կրկնօրինակն են: Դրանք պետք է թույլատրվեն, քանի որ կօգնեն խաղի պաշտոնյաներին՝ որոշումներ ընդունելիս:

4. Այլ հանդերձանք

էֆեկտիվության վերահսկման էլեկտրոնային համակարգեր (EPTS)

~~Մասնագիտական ստանդարտը կիրառվանացվի անցումային շրջանում մինչև 1 հունիսի 2019 թ.:~~ Հետևյալ տարբերանշանը մատնանշում է, որ (…)

Բացատրություն

Անցումային շրջանը ավարտվում է 1 հունիսի 2019:

Կանոն 5 – Մրցավարը

2. Մրցավարի որոշումներ

Փոփոխված տեքստ

Եթե մրցավարը գիտակցում է իր սխալը՝ ինքնուրույն կամ խաղի այլ պաշտոնյայի խորհրդից հետո, ապա նա չի կարող փոխել խաղի վերսկսման իր որոշումը, եթե խաղն արդեն վերսկսվել է կամ ինքն ազդարարել է առաջին կամ երկրորդ խաղակեսի ավարտը (ներառյալ լրացուցիչ ժամանակը, երբ այն խաղացվում է) և թողել է խաղադաշտը կամ անավարտ է թողել խաղը: Ամեն դեպքում, եթե խաղակեսի ավարտին մրցավարը թողել է խաղադաշտը, որպեսզի գնա Մրցավարի Դիտման Գոտի (ՄԴԳ) կամ գնացել է, որպեսզի հրահանգի խաղացողներին, որ վերադառնան խաղադաշտ, ապա դա չի արգելում նրան փոխել իր որոշումը այն միջադեպի համար, որը տեղի է ունեցել մինչև խաղակեսի ավարտը:

Բացառությամբ Կանոն 12.3-ի և ՄՎՕ ձեռնարկի սահմանումների, խաղի վերսկսումից հետո կարգապահական պատժամիջոցը կարելի է կիրառել միայն, եթե խաղի այլ պաշտոնա նկատել է խախտումը և փորձել տեղյակ պահել այդ մասին մրցավարին մինչ խաղի վերսկսումը: Պատժամիջոցի հետ կապված վերսկսումը չի կիրառվում:

Բացատրություն

- անավարտ բառը ավելի լավն է
- եթե խաղակեսի ավարտին մրցավարը գնում է ՄԴԳ կամ գնում է հրահանգելու խաղացողներին, որ վերադառնան խաղադաշտ, ապա ‘դիտում’ -ից հետո որոշումը կարող է փոփոխվել, եթե խախտումը տեղի է ունեցել մինչև խաղակեսի ավարտը
- լինում են դեպքեր, երբ խաղի պաշտոնյաներից որևէ մեկը նկատում / տեղյակ է պահում ԴՔ/ԿՔ –ի արժանի խախտման մասին (օրինակ.ՄՕ-ն դրոշով ազդանշան է տալիս գնդակից հեռու կատարվող բռնարարքի համար), բայց մրցավարը մինչ խաղը վերսկսելը չի տեսնում ազդանշանը / չի լսում տեղեկատվությունը: Չնայած դրան, խաղը վերսկսելուց հետո մրցավարը դեռ կարող է կիրառել համապատասխան կարգապահական պատժամիջոցը, բայց պատժամիջոցի հետ կապված վերսկսումը չի կարող կիրառել:

3. Իրավունքներ և պարտականություններ

Կարգապահական պատժամիջոց

Ավելացված տեքստ

Մրցավարը պետք է.

- միջոցներ կիրառի թիմի պաշտոնյաների նկատմամբ, ովքեր իրենց պահում են ոչ պատշաճ: Նա կարող է ~~իր հայեցողությամբ~~ նրանց բանավոր զգուշացնել կամ դեղին քարտ ցույց տալով զգուշացնել, ինչպես նաև կարող է կարմիր քարտ ցույց տալով՝ հեռացնել նրանց խաղադաշտից և դրա հարակից տարածքից՝ ներառյալ տեխնիկական գոտին: Եթե հնարավոր չէ հստակ որոշել խախտում կատարողին, ապա կարգապահական պատիժը պետք է կիրառվի տեխնիկական գոտում գտնվող ավագ մարզիչի նկատմամբ: Թիմի բժշկական անձնակազմի ներկայացուցիչը, ով կատարել է հեռացման արժանի խախտում կարող է մնալ, եթե (…)

Բացատրություն

Թիմի պաշտոնյաների ոչ պատշաճ վարքագծի դրսևորման համար տրվող ԴՔ/ԿՔ-երի փորձը հաջողություն է ունեցել բոլոր մակարդակներում՝ բացահայտելով շատ առավելություններ, ներառյալ, այն դեպքերը, երբ երիտասարդ մրցավարները գործ են ունենում մեծահասակ ‘դժվար’ մարզիչների հետ: Եթե հնարավոր չէ հստակ որոշել խախտում կատարողին, ապա տեխնիկական գոտում գտնվող ավագ թիմի պաշտոնյան (սովորաբար հիմնական մարզիչը) պետք է ստանա ԴՔ/ԿՔ-ը (որպես մնացած թիմի պաշտոնյաների համար պատասխանատու անձ):

3. Իրավունքներ և պարտականություններ

Վնասվածքներ

Ավելացված տեքստ

- Վնասվածք ստացած խաղացողը չի կարող օգնություն ստանալ խաղադաշտում (…): Խաղադաշտը թողնելու ընթացակարգում՝ բացառություններ կարող են արվել, երբ.
- (…)
- նշանակվել է 11մ-ոց և վնասվածք ստացած խաղացողը պետք է լինի հարվածողը

Բացատրություն

Անարդար է, երբ նա, ով պետք է կատարի 11մ-ոց հարվածը, բուժօգնության կարիք ունի և այդ պատճառով պետք է թողնի խաղադաշտը՝ չկարողանալով կատարել11մ-ոց հարվածը:

ԿԱՆՈՆ 7

ԽԱՂԻ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

3. Կորսված ժամանակի փոխհատուցում

Փոփոխված տեքստ

Յուրաքանչյուր խաղակեսում մրցավարի կողմից փոխհատուցվում է տվյալ խաղակեսում հետևյալ դեպքերի համար կորսված ամբողջ ժամանակը՝.

- ~~ջրադադարներ (որոնք չպետք է գերազանցի մեկ րոպեն) կամ բժշկական նպատակով կատարված այլ դադարներ, որոնք թույլատրված են մրցման կանոնակարգով~~
- մրցման կանոնակարգով թույլատրված բժշկական դադարներ, օրինակ՝ ջրադադարներ (որոնք չպետք է գերազանցեն մեկ րոպեն) կամ զովացնող դադարներ (ինչսուն վարկյանից մինչև երեք րոպե)

Բացատրություն

Խաղացողների առողջական անվտանգության նկատառումներից ելնելով, որոշակի եղանակային պայմանների դեպքում (օրինակ՝ բարձր խոնավություն և ջերմաստիճան), մրցման կանոնակարգերը կարող են թույլատրել զովացնող դադարներ՝ (ինչսուն վարկյանից մինչև երեք րոպե) մարմնի ջերմաստիճանն իջեցնելու համար: Դրանք տարբեր են ջրադադարներից (որոնք չպետք է գերազանցեն մեկ րոպեն), որոնք վերականգնման համար են:

Կանոն 08

Խաղի սկսումը և վերսկսումը

1. **Սկզբնահարված**

Ընթացակարգ

Փոփոխված տեքստ

- վիճականետումը շահած թիմը պետք է որոշի, թե որ դարպասին պետք է հարձակվի առաջին խաղակեսում կամ պետք է ընտրի սկզբնահարվածի կատարումը
- վերը նշվածից կախված, նրա մրցակից թիմը պետք է կատարի սկզբնահարվածը կամ պետք է որոշի թե որ դարպասին պետք է հարձակվի առաջին խաղակեսում
- ~~վիճականետումը շահած~~ այն թիմը, որը որոշում է թե որ դարպասին պետք է հարձակվի առաջին խաղակեսում պետք է կատարի երկրորդ խաղակեսի սկզբնահարվածը

Բացատրություն

Կանոնների վերջին փոփոխությունները սկզբնահարվածը դարձրել են ավելի դինամիկ (օրինակ՝ սկզբնահարվածից կարելի է անմիջականորեն գոլ խփել), այդ պատճառով հաճախ վիճականետումը շահած թիմի ավագը ցանկանում է ընտրել սկզբնահարվածը:

1. **Սկզբնահարված**

Խախտումներ և պատժամիջոցներ

Փոփոխված տեքստ

Եթե սկզբնահարված կատարող խաղացողը կրկին դիպչում է գնդակին մինչ մեկ այլ խաղացող կդիպչի դրան, ապա պետք է նշանակվի ազատ հարված կամ տուգանային հարված՝ ~~միտումնավոր~~ ձեռքով խաղի խախտման համար:

Բացատրություն

Ձևակերպումը փոփոխվել է, որպեսզի համահունչ լինի Կանոն12-ի ձեռքով խաղի նոր ձևակերպման հետ:

2. «Վիճաբանական գնդակ»

Ընթացակարգ

Նոր տեքստ

- «Վիճաբանական գնդակ»-ի նետումը պետք է կատարվի իր տուգանային հրապարակում գտնվող պաշտպանվող թիմի դարպասապահի համար, եթե խաղը կանգնեցնելիս.
  - գնդակը գտնվում էր այդ տուգանային հրապարակում կամ
  - վերջին հպումը գնդակի հետ կատարվել է այդ տուգանային հրապարակում

- Մնացած բոլոր դեպքերում, մրցավարը «վիճաբանական գնդակ»-ի նետումը պետք կատարի վերջինը գնդակին դիպած թիմի խաղացողներից մեկի համար, այնտեղ, որտեղ գնդակը վերջինը դիպչել է խաղացողին, օտար մարմնին, կամ ինչպես նկարագրված է Կանոն 9.1-ում՝ խաղի պաշտոնյային
- Մնացած բոլոր խաղացողները (երկու թիմերի) պետք է գտնվեն գնդակից նվազագույնը 4մ (4 յարդ) հեռավորության վրա՝ մինչ գնդակը կմտնի խաղի մեջ

Գնդակը խաղի մեջ է, երբ այն դիպչում է գետնին:

~~Ցանկացած թվով խաղացողներ կարող են մասնակցել «վիճաբանական գնդակ»-ի նետմանը (ներառյալ դարպասապահները): Մրցավարը չի կարող որոշել թե ով իրավունք ունի մասնակցել «վիճաբանական գնդակ»-ի նետմանը կամ պլանավորի դրա հետագա ընթացքը:~~

Բացատրություն

«Վիճաբանական գնդակ»-ի նետման ներկայիս ընթացակարգը հաճախ անարդացիորեն դարձնում է խաղի վերսկսումը արհեստական (օրինակ, հարվածում են գնդակին այնպես, որ հետագայում խաղը վերսկսվի մրցակցի կիսադաշտի հեռավոր կետից՝ կողագծից նետումով) կամ հանգեցնում է ագրեսիվ կոնֆրոնտացիայի: Գնդակի վերադարձնելը այն թիմին, որը վերջինն է խաղացել գնդակ, վերականգնում է այն ինչ եղել է՝ մինչ խաղը կանգնեցնելը, բացառությամբ, երբ խաղը կանգնեցվում է տուգանային հրապարակում: Այդ դեպքում, ամենապարզ որոշումն է՝ գնդակը վերադարձնել դարպասապահին: «Վիճաբանական գնդակ»-ի նետման ժամանակ, որպեսզի կանխվի, որ թիմերից մեկն անարդարացիորեն առավելություն ստանա, ապա երկու թիմերի բոլոր խաղացողները, բացի գնդակը ստացող խաղացողից պետք է գտնվեն գնդակից նվազագույնը 4մ (4 յարդ) հեռավորության վրա:

Կանոն 09

Գնդակը խաղի մեջ է կամ խաղից դուրս

1. Գնդակը խաղից դուրս է

Փոփոխված տեքստ

Գնդակը խաղից դուրս է, երբ.

- (…)
- <u>այն դիպչում է խաղի պաշտոնյային մնալով խաղադաշտում և</u>
    - <u>թիմը սկսում է հեռանկարային գրոհ, կամ</u>
    - <u>գնդակն անմիջապես գոլ է մտնում, կամ</u>
    - <u>փոխվում է գնդակին տիրապետող թիմը</u>

<u>Նշված բոլոր դեպքերում խաղը վերսկսվում է «վիճաբանական գնդակ»-ի նետումով:</u>

Բացատրություն

Շատ անարդար է, երբ թիմը ստանում է առավելություն կամ գոլ է խփում, գնդակը խաղի պաշտոնյային՝ հատկապես մրցավարին դիպչելու արդյունքում:

2. Գնդակը խաղի մեջ է

Փոփոխված տեքստ

Գնդակը խաղի մեջ է մնացած ամբողջ ժամանակ, ~~ներառյալ,~~ երբ այն դիպչում է խաղի պաշտոնյային և, երբ այն անդրադարձվում է ~~խաղի պաշտոնյայից~~, դարպասասյունից, հեծանից կամ անկյունային դրոշակից և մնում է խաղադաշտում:

Բացատրություն

Գնդակը խաղի մեջ է, երբ այն դիպչում է խաղի պաշտոնյային, բացի Կանոն 9.1-ում նկարագրված դեպքերի:

Կանոն 10

Խաղի ելքի որոշումը

1. Գոլի արձանագրում

Փոփոխված տեքստ

Գոլն արձանագրվում է (…), պայմանով, որ մինչ այդ գոլ խփող թիմի կողմից չի կատարվում «Խաղի Կանոնների» խախտում:
Եթե դարպասապահը նետում է գնդակը և այն անմիջապես մտնում է մրցակցի դարպասը, ապա պետք է նշանակվի հարված դարպասից:

Բացատրություն

Ձևակերպումը փոփոխվել է, որպեսզի համահունչ լինի Կանոն12-ի ձեռքով խաղի նոր ձևակերպման հետ:

Կանոն 12

Կանոնների խախտումներ և ոչ պատշաճ վարքագիծ

1. Տուգանային հարված

Փոփոխված տեքստ

- ~~միտումնավոր ձեռքով գնդակ է~~ կատարում է ձեռքով խաղի խախտում (բացի սեփական տուգանային հրապարակում գտնվող դարպասապահից)

Բացատրություն

Ձևակերպումը փոփոխվել է, որպեսզի համահունչ լինի Կանոն12-ի ձեռքով խաղի նոր ձևակերպման հետ:

1. Տուգանային հարված

Ձեռքով գնդակ խաղալ

Փոփոխված տեքստ

~~Ձեռքով գնդակ խաղալը դա խաղացողի կողմից դաստակով կամ ձեռքով գնդակին հպվելու միտումնավոր գործողությունն է:~~
~~Պետք է հաշվի առնվի հետևյալը.~~
~~• ձեռքի շարժումը դեպի գնդակը (ոչ գնդակի շարժումը դեպի ձեռքը)~~
~~• մրցակցի և գնդակի միջև հեռավորությունը (անսպասելի գնդակ)~~
~~• ձեռքի դիրքը, դեռ պարտադիր չի նշանակում, որ խախտում է կատարվել~~
Խախտում է,երբ խաղացողը.

- միտումնավոր դիպչում է գնդակին ձեռքով/դաստակով, ներառյալ ձեռքի/դաստակի շարժումը դեպի գնդակը
- տիրապետում/վերահսկում է գնդակը, այն իր ձեռքին/դաստակին դիպչելուց հետո, այնուհետև.
    - գրավում է մրցակցի դարպասը
    - ստանում է՝ ակնհայտ գոլ խփելու հնարավորություն
- ձեռքով/դաստակով անմիջապես գրավում է մրցակցի դարպասը, նույնիսկ, եթե դա կատարվել է պատահականորեն՝ ներառյալ դարպասապահի կողմից

Սովորաբար խախտում է,եթե խաղացողը.
- ձեռքով/դաստակով դիպչում է գնդակին, երբ.
    - ձեռքը/դաստակը մարմին անբնականորեն մեծացնում է
    - ձեռքը/դաստակը գտնվում է ուսերից վեր/դուրս (բացառությամբ այն դեպքերի, երբ խաղացողը միտումնավոր գնդակ է խաղում, որն այնուհետև դիպչում է իր ձեռքին/դաստակին)

Վերը նշված խախտումները կիրառվում են, նույնիսկ, եթե գնդակը դիպչում է խաղացողի ձեռքին/դաստակին, մոտ կանգնած այլ խաղացողի գլխին կամ մարմնին (ներառյալ ոտքերը) դիպչելուց անմիջապես հետո:

Վերը նշված խախտումներից բացառություն են կազմում և սովորաբար խախտում չեն համարվում, երբ գնդակը դիպչում է խաղացողի ձեռքին/դաստակին.

- անմիջապես իր գլխից կամ մարմնից (ներառյալ ոտքերը)
- անմիջապես մոտ կանգնած այլ խաղացողի գլխից կամ մարմնից (ներառյալ ոտքերը)
- երբ ձեռքը/դաստակը մոտ է մարմնին և մարմինն անբնականորեն չի մեծացնում
- երբ խաղացողը ընկնում է և ձեռքը/դաստակը մարմնի և գետնի միջև է՝պաշտպանելով մարմինը, բայց ոչ երկարաձգված կամ ուղղահայացորեն ձգված մարմնից դուրս

Բացատրություն

Ձեռքով խաղը մեծ պարզաբանման կարիք ունի, առանձնահատուկ այն դեպքերը, երբ ոչ միտումնավոր ձեռքով խաղը խախտում է: Մի շարք սկզբունքների վերաձևակերպումներից հետևում է, որ

- ֆուտբոլը չի ընդունում, երբ գոլ է խփվում ձեռքով/դաստակով (նույնիսկ պատահականորեն)
- ֆուտբոլն ակնկալում է, որ խաղացողը պատժվի ձեռքով խաղի համար, երբ նա տիրապետում/վերահսկում է իր ձեռքից/դաստակից եկած գնդակը և ստանում է մեծ առավելություն, օրինակ՝ գոլ է խփում կամ ստանում է ակնհայտ գոլ խփելու հնարավորություն
- խաղացողի համար բնական է ընկնելուց դնել իր ձեռքը մարմնի և գետնի միջև
- երբ ձեռքը գտնվում է ուսերից վեր հազվադեպ դեպքերում բնական է և խաղացողը ռիսկի է գնում, երբ ձեռքերն այդ դիրքում են, ներառյալ երբ սահանկում է կատարում
- եթե գնդակը գալիս է խաղացողի մարմնից կամ մոտ գտնվող այլ խաղացողից(երկու թիմերի) դեպի ձեռքը, հաճախ անհնար է խուսափել գնդակի հետ հպումից

1. **Տուգանային հարված**

Ձեռքով գնդակ խաղալ

Փոփոխված տեքստ

Տուգանային հրապարակից դուրս ձեռքով գնդակ խաղալու համար դարպասապահի վրա տարածվում են նույն սահմանափակումները, ինչ որ ցանկացած այլ խաղացողի: ~~Դարպասապահը սեփական տուգանային հրապարակում չի կարող մեղավոր ճանաչվել ձեռքով գնդակ խաղալու համար և պատժվել տուգանային հարվածով կամ դրա հետ կապված ցանկացած այլ պատժամիջոցով, սակայն ձեռքով գնդակ խաղալու համար նա կարող է մեղավոր ճանաչվել այն դեպքերում, երբ դա պատժվում է ազատ հարվածով:~~ Եթե դարպասապահը ձեռքով գնդակ է խաղում սեփական տուգանային հրապարակում, երբ դա չի թույլատրվում, ապա պետք է նշանակվի ազատ հարված, բայց չպետք է կիրառվի կարգապահական պատժամիջոց:

Բացատրություն

Դարպասապահը չի կարող ձեռքով գնդակ խաղալ սեփական տուգանային հրապարակում՝ թիմակիցի միտումնավոր ոտքով փոխանցումից կամ թիմակցի կատարած կողագծից նետումից հետո կամ այն իր տիրապետումից թողնելուց հետո: Եթե նրանք դա անեն, ապա պետք է նշանակվի ազատ հարված, բայց այս կամ ցանկացած այլ դեպքերում, երբ նրանց չի թույլատրվում ձեռքով գնդակ խաղալ նրանք չպետք է ենթարկվեն որևէ կարգապահական պատասխանատվության, նույնիսկ, եթե կանխել են հեռանկարային գրոհ կամ գոլ խփելու ակնհայտ հնարավորություն:

2. Ազատ հարված

Փոփոխված տեքստ

Ազատ հարված նշանակվում է, երբ դարպասապահը իրենց տուգանային հրապարակում կատարում է հետևյալ խախտումներից որևէ մեկը.

- պահում է գնդակը ձեռքերում/դաստակով վեց վայրկյանից ավելի, մինչ այն դուրս կթողնի իր տիրապետումից
- ձեռքերով/դաստակով դիպչում է գնդակին այն իր տիրապետումից թողնելուց հետո, մինչ դրան կդիպչի այլ խաղացող
- ձեռքերով/դաստակով դիպչում է գնդակին, բացառությամբ եթե դարպասապահը ակնհայտորեն հարվածել կամ փորձել է հարվածել գնդակին՝ խաղի մեջ վերադարձնելու համար.
  - դարպասապահին ուղղված թիմակիցի միտումնավոր ոտքով փոխանցումից հետո
  - ստանալով այն անմիջապես թիմակցի կողմից կատարված կողագծից նետումից

Բացատրություն

- “դաստակ”-ի ներառումը համահունչ է ձեռքով գնդակ խաղալուն վերաբերվող Կանոնի մյուս մասերի հետ
- Երբ դարպասապահը ակնհայտորեն հարվածում է կամ փորձում է հարվածել գնդակը և վերադարձնել այն խաղի մեջ, սա չի հետապնդում ձեռքով խաղալու նպատակ, այսպիսով, եթե այդ գործողությունը անհաջող է, ապա դրանից հետո դարպասապահը կարող է ձեռքով գնդակ խաղալ առանց խախտում կատարելու

3. Կարգապահական պատժամիջոց

Փոփոխված տեքստ

Եթե խաղացողը կամ թիմի պաշտոնյան, մինչ խաղի սկիզբը խաղադաշտ մտնելը, կատարում է հեռացման արժանի խախտում, ապա մրցավարն իրավասու է թույլ չտալ խաղացողին կամ թիմի պաշտոնյային մասնակցելու խաղին (տես 3.6): Մրցավարը պետք է զեկուցագիր ներկայացնի ցանկացած ոչ պատշաճ վարքագծի դրսևորման դեպքում:

Խաղացողը կամ թիմի պաշտոնյան, ով կատարում է զգուշացման կամ հեռացման արժանի խախտում, խաղադաշտում կամ դրա սահմաններից դուրս ~~մրցակցի, թիմակցի, խաղի պաշտոնյաների կամ ցանկացած այլ անձի հանդեպ կամ խախտում է Խաղի Կանոնները,~~ պետք է պատժվի՝ համաձայն կատարած խախտման բնույթի:

Կարմիր և դեղին քարտ կարող է ցույց տրվել միայն խաղացողին, փոխարինողին, ~~կամ~~ փոխարինված խաղացողին կամ թիմի պաշտոնյային :

Բացատրություն

Այժմ կարմիր և դեղին քարտեր կարող են ցույց տրվել նաև թիմի պաշտոնյային (տես Կանոն 5):

3. Կարգապահական պատժամիջոց

Քարտ ցույց տալու համար՝ խաղի վերսկսման ձգձգում

Ավելացված տեքստ

Եթե մրցավարն որոշել է զգուշացնել կամ հեռացնել խաղացողին, ապա խաղը չպետք է վերսկսվի, մինչև պատժամիջոցը կիրառվի, բացառությամբ, երբ ոչ մեղավոր թիմը կատարում է տուգանային/ազատ հարվածի արագ խաղարկում՝ ունենալով գոլ խփելու ակնհայտ հնարավորություն և մրցավարը չի սկսել կարգապահական պատժամիջոցը կիրառելու ընթացակարգը : Այդ դեպքում պատժամիջոցը պետք է կիրառվի հաջորդ խաղադադարի ժամանակ: Եթե խախտումը կանխել էր մրցակցի գոլ խփելու ակնհայտ հնարավորությունը, ապա խաղացողը պետք է զգուշացվի:

Բացատրություն

Երբեմն, գրոհը կասեցվում է զգուշացման կամ հեռացման արժանի խախտումով և հարձակվող թիմը կատարում է նշանակված տուգանային/ազատ հարվածի արագ խաղարկում՝ շարունակելով խափանված գրոհը: Ակնհայտորեն անարդար է, երբ այս նոր գրոհը կասեցվում է ԴՔ/ԿՔ ցույց տալու համար: Ամեն դեպքում, եթե մրցավարը զբաղեցնում է մեղավոր թիմին սկսելով ԴՔ/ԿՔ ցույց տալու ընթացակարգը, ապա տուգանային/ազատ հարվածի արագ խաղարկումը չի թույլատրվում: Ակնհայտ գոլ խփելու հնարավորությունից զրկելու խախտման համար խաղացողը պետք է զգուշացվի (ԴՔ) այլ ոչ թե հեռացվի,

որովհետև գրոհը վերսկսվել է (ինչպես, երբ կիրառվում է առավելությունը, ակնհայտ գոլ խփելու հնարավորությունից զրկելու խախտման համար):

3. Կարգապահական պատժամիջոց

Զգուշացման արժանի խախտումներ

Գոլի տոնում

Ավելացված տեքստ

Խաղացողը պետք է զգուշացվի, <u>նույնիսկ եթե, գոլը չի արձանագրվել</u> (…) համար.

Բացատրություն

Գոլի ոչ պատշաճ տոնումը՝ զգուշացման արժանի խախտում է, նույնիսկ եթե այն չի արձանագրվում, քանի որ ունենում է նույն ազդեցությունը (անվտանգության, խաղի իմիջ և այլն), ինչ որ գոլն արձանագրվելու դեպքում:

3. Կարգապահական պատժամիջոց

Հեռացման արժանի խախտումներ

Փոփոխված տեքստ

Խաղացողը, փոխարինողը կամ փոխարինված խաղացողը պետք է հեռացվի, եթե կատարում է հետևյալ խախտումներից որևէ մեկը.

- ձեռքով ~~միտումնավոր գնդակ~~ խաղի խախտումով, զրկում է մրցակցին գոլից կամ ակնհայտ գոլային հնարավորությունից (…)

Բացատրություն

Ձևակերպումը փոփոխվել է, որպեսզի համահունչ լինի Կանոն12-ի ձեռքով խաղի նոր ձևակերպման հետ:

3. Կարգապահական պատժամիջոց

Գոլից կամ գոլ խփելու ակնհայտ հնարավորությունից զրկելը

Փոփոխված տեքստ

Եթե խաղացողը ~~միտումնավոր գնդակ~~ ձեռքով խաղի արդյունքում մրցակցին զրկում է գոլից կամ ակնհայտ գոլային հնարավորությունից, ապա նա պետք է հեռացվի խաղադաշտից՝ անկախ այն բանից թե որտեղ է կատարվել խախտումը:

Բացատրություն

Ձևակերպումը փոփոխվել է, որպեսզի համահունչ լինի Կանոն12-ի ձեռքով խաղի նոր ձևակերպման հետ:

3. Կարգապահական պատժամիջոց

Թիմի պաշտոնյաներ

Ավելացված տեքստ

Եթե խախտում է կատարվել և մեղավորին հնարավոր չէ որոշել, ապա պատժամիջոցը պետք է ստանա տեխնիկական գոտում գտնվող թիմի գլխավոր մարզիչը:

Բանավոր զգուշացում

Հետևյալ խախտումները սովորաբար հանգեցնում են բանավոր զգուշացման, իսկ դրանց կրկնվելը կամ այլ բացահայտ խախտումները կհանգեցնեն զգուշացման կամ հեռացման.

- խաղադաշտ մտնելը՝ առանց ագրեսայի
- չհամագործակցելը խաղի պաշտոնյայի հետ, օրինակ՝ մրցավարի օգնականի կամ չորրորդ պաշտոնյայի զուգմունքի/խնդրանքի անտեսելը
- որոշման հետ չնչին/ոչ բացահայտ անհամաձայնությունը (խոսքով կամ գործողությամբ)
- երբեմն տեխնիկական գոտու սահմանները լքելը՝ չկատարելով այլ խախտումներ

Զգուշացում

Զգուշացման արժանի խախտումները ներառում են (բայց, չեն սահմանափակվում այսքանով).

- ակնհայտորեն/սիստեմատիկորեն տեխնիկական գոտու սահմանների չպահպանելը
- իր թիմի կողմից կատարվող խաղի վերսկսման ձգձգելը
- միտումնավոր մրցակցի տեխնիկական գոտի մտնելը (առանց ագրեսայի)
- անհամաձայնություն արտահայտելը խոսքով կամ հետևյալ գործողություններով.
  - ✓ շիշ կամ այլ առարկա նետելով/ոտքով հարվածելով
  - ✓ խաղի պաշտոնյայի(ների) նկատմամբ ժեստերով անհարգալից վերաբերմունք արտահայտելը, օրինակ՝ սարկազմով ծափահարելը
- մրցավարի դիտման գոտի(ՄԴԳ) մտնելը

- բացահայտորեն/սիստեմատիկաբար ժեստերով դեղին կամ կարմիր բարտ ցույց տալ պահանջելը
- բացահայտորեն հեռուստացույցի էկրան ցույց է տալը՝ պահանջելով ՄՎՕ ստուգում
- սադրիչ կամ բորբոքող ժեստեր կամ գործողություններ օգտագործելը
- սիստեմատիկորեն՝ անընդունելի վարքագիծ դրսևորելը (ներառյալ՝ նախազգուշացման արժանի խախտումների կրկնվելը)
- խաղի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցույց տալը

Հեռացում

Հեռացման արժանի խախտումները ներառում են (բայց, չեն սահմանափակվում այսքանով).

- մրցակից թիմի կողմից կատարվող խաղի վերսկսման ձգձգելը, օրինակ՝ բռնելով գնդակը, ոտքով գնդակը մի կողմ հարվածելով, մրցակցի շարժմանը խոչընդոտելով
- միտումնավոր տեխնիկական գոտին լքելը, որպեսզի.
  - ✓ արտահայտի անհամաձայնություն կամ վիճաբանի խաղի պաշտոնյաների հետ
  - ✓ կատարի սադրիչ կամ բորբոքող գործողություններ
- ագրեսիվ ձևով մրցակցի տեխնիկական գոտի մտնելը
- միտումնավոր ինչ-որ իր նետելը/ոտքով հարվածելը դեպի խաղադաշտ
- խաղադաշտ մտնելը՝ միտումով.
  - ✓ հակառակվել խաղի պաշտոնյաներին (ներառյալ խաղակասին կամ ավարտից հետո)
  - ✓ խանգարել խաղին, մրցակցի խաղացողին կամ խաղի պաշտոնյային
- վիդեո օպերացիոն սենյակ (ՎՕՍ) մտնելը
- մրցակից խաղացողի, փոխարինողի, թիմի պաշտոնյայի, խաղի պաշտոնյայի, հանդիսատեսի կամ այլ անձի (օրինակ՝ գնդակ մատակարարող տղա/աղջիկ, անվտանգության կամ մրցաշարի պաշտոնյա) հանդեպ ֆիզիկական կամ ագրեսիվ վարքագիծ դրսևորելը (ներառյալ թքելը կամ կծելը)
- նույն խաղում երկրորդ զգուշացում (ԴՔ) ստանալը
- վիրավորական,նվաստացուցիչ, անվայել խոսքեր և/կամ ժեստեր օգտագործելը
- չթույլատրվող էլեկտրոնային կամ հաղորդակցման միջոցներ օգտագործելը և/կամ, դրանք օգտագործելու հետևանքով իրեն ոչ պատշաճ պահելը
- բռնարարք կատարելը

Բացատրություն

Կանոններում ներառվում են այն հիմնական խախտումները, որոնք կատարելու դեպքում թիմի պաշտոնյաները պետք է բանավոր զգուշացվեն , ստանան դք/կք:

4. Խաղի վերսկսում՝ խախտումներից և ոչ պատշաճ վարքագծից հետո

Փոփոխված տեքստ

(…)

Եթե գնդակը խաղի մեջ է և խաղացողը <u>ֆիզիկական հպումով</u> խախտում է կատարում խաղադաշտում.

- մրցակցի նկատմամբ, ապա պետք է նշանակվի ազատ/տուգանային կամ 11մետրանոց հարված
- թիմակցի, փոխարինողի, փոխարինված կամ հեռացված խաղացողի, թիմի պաշտոնյայի կամ խաղի պաշտոնյայի նկատմամբ, ապա պետք է նշանակվի տուգանային կամ 11 մետրանոց հարված
- ցանկացած այլ անձի նկատմամբ, ապա պետք է նշանակվի «վիճաբանական գնդակի» նետում

<u>Բոլոր բանավոր կատարված խախտումները պետք է պատժվեն ազատ հարվածով:</u>

Բացատրություն

Հաստատվում է թե ինչպես պետք է վերսկսվի խաղը ֆիզիկական հպումով խախտումների դեպքում և, որ բոլոր բանավոր կատարված խախտումների դեպքում, նույնիսկ՝ խաղի պաշտոնյայի հանդեպ,պետք է պատժվեն ազատ հարվածով:

4. Խաղի վերսկսում՝ խախտումներից և ոչ պատշաճ վարքագծից հետո

Ավելացված տեքստ

Եթե <u>խաղացողը</u> խաղադաշտից դուրս խախտում է կատարում իր թիմի խաղացողի, փոխարինողի, փոխարինված խաղացողի կամ թիմի պաշտոնյայի նկատմամբ, ապա խաղը պետք է վերսկսվի ազատ հարվածով խաղադաշտի եզրագծի այն կետից, որն ամենամոտն է խախտման տեղին:

Բացատրություն

Պարզաբանվում է, որ, պետք է նշանակվի ազատ հարված, եթե խաղացողը խախտում է կատարում թիմակցի կամ իր թիմի պաշտոնյաներից որևէ մեկի նկատմամբ:

4. Խաղի վերսկսում՝ խախտումներից և ոչ պատշաճ վարքագծից հետո

Փոփոխված տեքստ

Եթե խաղացողը, ով գտնվում է խաղադաշտի ներսում կամ դուրս ~~կանգնած,~~ որևէ իր է նետում կամ ոտքով հարվածում դրան (չհաշված խաղի գնդակը) դեպի մրցակիցը կամ, որևէ իր է նետում կամ ոտքով հարվածում դրան (ներառյալ գնդակ) դեպի մրցակից փոխարինողը, փոխարինված կամ հեռացված խաղացողը, ~~կամ~~ թիմի պաշտոնյան կամ խաղի պաշտոնյան կամ դեպի խաղի գնդակը, ապա խաղը պետք է վերսկսվի տուգանային հարվածով (…)

Բացատրություն

Պարզաբանվում է, որ դեպի ինչ որ մեկը կամ դեպի խաղի գնդակը իրին ոտքով հարվավածելը պատժվում է այնպես ինչպես իրը նետելու դեպքում:

ԿԱՆՈՆ 13 - ՏՈՒԳԱՆԱՅԻՆ/ԱԶԱՏ ՀԱՐՎԱԾՆԵՐ

1. Հարվածների տեսակներ

Ազատ հարվածի ազդանշան

Ավելացված տեքստ

Մրցավարը ազատ հարվածի ազդանշան է տալիս՝ ձեռքը գլխից վեր բարձրացնելով: Նա ձեռքը պետք պահի այդ դիրքում, մինչև հարվածից հետո գնդակը դիպչի մեկ այլ խաղացողի, ~~կամ~~ դուրս գա խաղից կամ, <u>երբ պարզ է, որ անմիջապես գոլ չի կարող խփվել:</u>

Բացատրություն

Շատ ազատ հարվածներ կատարվում են մրցակցի դարպասից շատ հեռու և հնարավոր չէ անմիջապես գոլ խփել(օրինակ՝ ազատ հարվածներ խաղից դուրսի համար): Այս դեպքերում մրցավարին անհրաժեշտ է ազդանշանը տալ միայն մինչև հարվածը կատարվելը, որովհետև հեշտ չէ միևնույն ժամանակ վազել և ազդանշանը ցույց տալ:

2. Ընթացակարգ

Փոփոխված տեքստ

- տուգանային / ազատ հարվածները, որոնք նշանակվում են, երբ խաղացողը առանց մրցավարի թույլտվության մտնում, վերադառնում է խաղադաշտ կամ դուրս է գալիս խաղադաշտից, պետք է կատարվեն այնտեղից, որտեղ գտնվել է գնդակը խաղը կանգնեցնելիս: Այնուամենայնիվ, եթե խաղացողը ~~դուրս է գալիս խաղադաշտից՝ որպես խաղի մաս և մեկ այլ խաղացողի նկատմամբ~~ խախտում է կատարում խաղադաշտից դուրս, ապա խաղը պետք է վերսկսվի տուգանային / ազատ հարվածով՝ եզրագծի այն կետից, որն ամենամոտն է խախտման տեղին: Տուգանային հարվածով պատժվող խախտումների դեպքում պետք է նշանակվի 11մ-ոց, եթե դա խախտումը կատարողի տուգանային հրապարակում է:

Բացատրություն

Չևակերպումը ավելացվել է, որպեսզի այն համահունչ լինի Կանոնների այլ ձևակերպումների հետ:

2. Ընթացակարգ

Փոփոխված տեքստ

Գնդակը.

- խաղի մեջ է, երբ ոտքով հարվածից հետո այն տեսանելիորեն շարժվում է ~~բացառությամբ սեփական տուգանային հրապարակում, պաշտպանվող թիմի օգտին նշանակված տուգանային / ազատ հարվածների: Այդ դեպքում գնդակը խաղի մեջ է մտնում, երբ ոտքով հարվածից հետո այն ուղղակիորեն դուրս է գալիս տուգանային հրապարակից~~

Բացատրություն

Փորձերը ցույց են տվել, որ խաղի վերսկսումը դառնում է ավելի արագ և կառուցողական, երբ պաշտպանվող թիմը սեփական տուգանային հրապարակից կատարում է տուգանային / ազատ հարված և գնդակը համարվում է խաղի մեջ, երբ դրան հարվածում են ոտքով և այն տեսանելիորեն շարժվում է՝դուրս չգալով տուգանային հրապարակից: Մրցակիցները պետք է դտնվեն տուգանային հրապարակից դուրս և գնդակից ամենաքիչը 9.15մ հեռավորության վրա մինչ այն կմտնի խաղի մեջ: Նույն փոփոխությունը կատարվել է նաև դարպասից հարվածի ժամանակ (տես Կանոն 16)

2. Ընթացակարգ

Ավելացված տեքստ

Մինչ գնդակը կմտնի խաղի մեջ, բոլոր մրցակիցները պետք է գտնվեն.

- գնդակից նվազագույնը 9.15 մ (10 յարդ) հեռավորության վրա, բացառությամբ (…)
- տուգանային հրապարակից դուրս, մրցակցի տուգանային հրապարակում նշանակված տուգանային / ազատ հարվածների դեպքում

<u>Եթե պատը ձևավորվում է պաշտպանվող թիմի երեք կամ ավելի խաղացողների կողմից, ապա հարձակվող թիմի խաղացողները պատից պետք է գտնվեն նվազագույնը 1մ (1 յարդ) հեռավորության վրա՝ մինչ գնդակը կմտնի խաղի մեջ:</u>

Բացատրություն

Հաճախ տուգանային / ազատ հարվածների ժամանակ հարձակվողները, ովքեր գտնվում են պաշտպանողական պատին շատ մոտ կամ պաշտպանողական պատի մեջ են, առաջացնում են իրավիճակի ղեկավարման խնդիրներ և ժամանակի կորուստ: Հարձակվողների համար չկա օրինական մարտավարական հիմնավորում, որ արդարացնեն նրանց գտնվելը պատի մեջ: Հակառակ դրան նրանց ներկայությունը պատի մեջ դեմ է խաղի ոգուն և հաճախ վնասում է խաղին:

3. **Խախտումներ և պատժամիջոցներ**
2. Խախտումներ և պատժամիջոցներ

Ավելացված տեքստ (1-ին պարբերությունից հետո)

(…) խաղի վերսկսումը ձգձգելու համար.

<u>Եթե տուգանային/ազատ հարվածը կատարելիս հարձակվող թիմի խաղացողը գտնվում է պաշտպանվող թիմի երեք կամ ավելի խաղացողների կողմից ձևավորված պատին 1մ (1 յարդ)-ից մոտ, ապա պետք է նշանակվի ազատ հարված:</u>

Բացատրություն

Պարզաբանվում է խաղի վերսկսումը, երբ հարձակվողը պատին 1մ-ից մոտ է :

3. Խախտումներ և պատժամիջոցներ

Փոփոխված տեքստ

Եթե պաշտպանվող թիմը, սեփական տուգանային հրապարակից կատարում է տուգանային/ազատ հարված և տուգանային հրապարակում գտնվող որևէ մրցակից (…), դիպչում է գնդակին կամ պայքարում է գնդակի համար մինչ ~~մեկ այլ խաղացող կդիպչի դրան,~~ այն կմտնի խաղի մեջ, ապա տուգանային/ազատ հարվածը պետք է կրկնվի:

~~Եթե պաշտպանվող թիմը սեփական տուգանային հրապարակից կատարում է տուգանային/ազատ հարված և գնդակն ուղղակիորեն դուրս չի գալիս այնտեղից, ապա հարվածը պետք է կրկնվի:~~

Բացատրություն

Հաստատվում է վերը նկարագրված իրադրությունում խաղի վերսկսումը :

3. Խախտումներ և պատժամիջոցներ

Փոփոխված տեքստ

Եթե հարվածողը, գնդակը խաղի մեջ մտցնելուց հետո, մինչ այն կդիպչի մեկ այլ խաղացողի, կրկին դիպչում է գնդակին, ապա պետք է նշանակվի ազատ հարված: Եթե հարվածողը ~~միտումնավոր ձեռքով գնդակ է խաղում~~ <u>կատարում է ձեռքով խաղի խախտում, ապա.</u>
(…)

Բացատրություն

Հաստատվում է վերը նկարագրված իրադրությունում խաղի վերսկսումը :

ԿԱՆՈՆ 14 - 11 ՄԵՏՐԱՆՈՑ ՀԱՐՎԱԾ

1. Ընթացակարգ

Ավելացված տեքստ

Գնդակը պետք է անշարժ տեղադրված լինի 11 մետրանոց նշակետի վրա: Դարպասասյունները, հեծանը և դարպասային ցանցը չպետք է շարժվեն:

(…)

Պաշտպանվող թիմի դարպասապահը, մինչև գնդակին ոտքով հարվածելը, պետք է գտնվի դարպասասյուների միջև, դարպասային գծի վրա, դեմքով դեպի հարվածողը: Այդ ընթացքում՝ նա չպետք է դիպչի դարպասասյուներին, հեծանին և դարպասի ցանցին :
(…)

11 մետրանոց հարված կատարողը պետք է գնդակը ոտքով հարվածի առաջ: Կրունկով հարված կատարել թույլատրվում է, պայմանով, որ գնդակը շարժվի առաջ:

Գնդակին ոտքով հարվածելու պահին, պաշտպանվող թիմի դարպասապահի մեկ ոտնաթաթի նվազագույնը մի մասը կամ դրա պրոեկցիան պետք է հպվի դարպասային գծին:

Բացատրություն

- Մրցավարը չպետք է 11մետրանոց հարվածը կատարելու ազդանշան տա, եթե դարպասապահը դիպչում է դարպասասյուներին, հեծանին, դարպասի ցանցին կամ, երբ դրանք շարժվում են, օրինակ, երբ դարպասապահը ոտքով հարվածում/շարժում է դրանք:

- Դարպասապահներին չի թույլատրվում կանգնել դարպասային գծից առաջ կամ հետ: 11մետրանոց հարվածի կատարման պահին, դարպասապահին թույլատրվում է մեկ ոտնաթաթի նվազագույնը մի մասով (կամ, ցատկելիս՝ դրա պրոեկցիայով) հպվել դարպասային գծին: Դա ավելի պրակտիկ մոտեցում է և ավելի հեշտացնում է նկատել այն դեպքերը, երբ երկու ոտքերը գծի վրա չեն լինում: Քանի որ հարվածողին թույլատրվում է վազելու ժամանակ օգտագործել խաբքեր, ապա, տրամաբանական է, որ դարպասապահին՝ հարվածը կանխատեսելիս թույլատրվի կատարել մեկ քայլ:

2. Խախտումներ և պատժամիջոցներ

Ավելացված տեքստ

Եթե մրցավարը 11մետրանոց հարվածը կատարելու ազդանշան է տալիս, ապա այն պետք է կատարվի: Եթե այն չի կատարվում, ապա մրցավարը կարող է կիրառել կարգապահական պատժամիջոցներ,մինչ կրկին կտա հարվածը կրկնելու ազդանշան:

Բացատրություն

Եթե խախտումը կատարվել է, մրցավարի կողմից 11մետրանոց հարվածը կատարելու ազդանշան տալուց հետո, բայց այն դեռ չի կատարվել, ապա մրցավարը չի կարող նշանակվել տուգանային/ազատ հարված, քանի որ գնդակը դեռ չէր մտել խաղի մեջ: Անհրաժեշտ կարգապահական պատժամիջոց դեռ կարելի է կիրառվել:

2. Խախտումներ և պատժամիջոցներ

Փոփոխված տեքստ

- եթե հարվածողը կրկին դիպչում է գնդակին, մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա.
  - պետք է նշանակվի ազատ հարված (կամ տուգանային հարված՝ ~~միտումնավոր~~ ձեռքով խաղի <u>խախտման</u> համար)

Բացատրություն

Ձևակերպումը ավելացվել է, որպեսզի այն համահունչ լինի Կանոն 12-ում ձեռքով խաղի նոր ձևակերպման հետ:

ԿԱՆՈՆ 15 - ԿՈՂԱԳԾԻՑ ՆԵՏՈՒՄ

1. Ընթացակարգ

Փոփոխված տեքստ

Բոլոր մրցակիցները պետք է գտնվեն ~~նետման տեղից~~ կողագծի այն կետից, որտեղից պետք է կատարվի նետումը նվազագույնը 2 մետր (2 յարդ) հեռավորության վրա:

Բացատրություն

Այս փոփոխությունը օգտակար է այն դեպքերում, երբ խաղացողը կողագծից նետումը կատարում է կողագծից հետ՝ որոշակի հեռավորությունից:

2. Խախտումներ և պատժամիջոցներ

Փոփոխված տեքստ

Եթե գնդակը խաղի մեջ մտնելուց հետո, նետողը կրկին դիպչում է գնդակին մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա պետք է նշանակվի ազատ հարված: Եթե նետողը ~~միտումնավոր ձեռքով գնդակ է խաղում~~ ձեռքով խաղի խախտում է կատարում, ապա.(…)

Բացատրություն

Ձևակերպումը ավելացվել է, որպեսզի այն համահունչ լինի Կանոն 12-ում ձեռքով խաղի նոր ձևակերպման հետ:

ԿԱՆՈՆ 16 - ՀԱՐՎԱԾ ԴԱՐՊԱՍԻՑ

1. Ընթացակարգ

Փոփոխված տեքստ

- Գնդակը խաղի մեջ է մտնում, երբ ~~դուրս է գալիս տուգանային հրապարակից~~ դրան հարվածում են ոտքով և այն տեսանելիորեն շարժվում է

Բացատրություն

Փորձը ցույց տվեց, որ այն դեպքում, երբ դարպասից հարվածի ժամանակ գնդակը համարում են խաղի մեջ, երբ դրան հարվածում են ոտքով և պարտադիր չի լինում, որ այն գա տուգանային հրապարակից,դարձնում է խաղի վերսկսումն արագ, ավելի դինամիկ և կառուցողական: Դա կրճատում է ժամանակի կորուստը, ներառյալ դադարեցնում է ժամանակ ձգձգելու տակտիկան, երբ պաշտպանը միտումնավոր գնդակ է խաղում, որը դեռ դուրս չի եկել տուգանային հրապարակից՝ գիտակցելով, որ հարվածը պետք է կրկնվի: Մրցակիցները պետք է գտնվեն տուգանային հրապարակիցդուրս՝ մինչ գնդակը կմտնի խաղի մեջ:

2. Խախտումներ և պատժամիջոցներ

Փոփոխված տեքստ

~~Եթե հարվածից հետո գնդակն դուրս չի գալիս տուգանային հրապարակից կամ մինչև դուրս գալը դիպչում է որևէ խաղացողի, ապա հարվածը կրկնվում է:~~

Բացատրություն

Տես վերևում (Կանոն 16.1)

2. Խախտումներ և պատժամիջոցներ

Փոփոխված տեքստ

Եթե գնդակը խաղի մեջ մտնելուց հետո հարվածողը կրկին դիպչում է գնդակին՝ մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա պետք է նշանակվի ազատ հարված: Եթե հարվածողը ~~միտումնավոր ձեռքով գնդակ է խաղում~~ ձեռքով խաղի խախտում է կատարում , ապա.(…)

Բացատրություն

Ձևակերպումը ավելացվել է, որպեսզի այն համահունչ լինի Կանոն 12-ում ձեռքով խաղի նոր ձևակերպման հետ:

2. Խախտումներ և պատժամիջոցներ

Փոփոխված տեքստ

Եթե հարված դարպասից կատարելու պահին, մրցակիցը գտնվում է տուգանային հրապարակում, քանի որ ժամանակ չի ունեցել այնտեղից դուրս գալու համար, ապա մրցավարը պետք է թույլատրի խաղը շարունակել: Եթե տուգանային հրապարակում գտնվող մրցակիցը (…), դիպչում է գնդակին կամ պայքարում է գնդակի համար՝ մինչ ~~այլ խաղացող կդիպչեր դրան,~~ այն կմտնի խաղի մեջ, ապա դարպասից հարվածը պետք է կրկնվի:

Բացատրություն

Պարզաբանվում է մրցավարի գործողությունները դարպասից հարվածի ժամանակ, երբ մրցակիցը տուգանային հրապարակում է:

ԿԱՆՈՆ 17 - ԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ ՀԱՐՎԱԾ

2. Խախտումներ և պատժամիջոցներ

Փոփոխված տեքստ

Եթե գնդակը խաղի մեջ մտնելուց հետո հարվածողը կրկին դիպչում է գնդակին՝ մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա պետք է նշանակվի ազատ հարված: Եթե հարվածողը ~~միտումնավոր ձեռքով գնդակ է խաղում~~ ձեռքով խաղի խախտում է կատարում ապա.(…)
.

Բացատրություն

Ձևակերպումը ավելացվել է, որպեսզի այն համահունչ լինի Կանոն 12-ում ձեռքով խաղի նոր ձևակերպման հետ: